24434

ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ԱՐԻՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄ

331.88
Ա-89
ԱՍՍ

ԲԱՆԱՁԵՎ

ՀԱՄԿԽ-Ի 10-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԸՆԴՈՒՆՎԱԾ

Հայկական ՍՍՌ Տարրական և միջնակարգ դպրոցների աշխատողների
Արիմիությյան Կենտկոմի 3-րդ պլենումում

ОБРАЗЦОВЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ԼՈՒՍԱՀՐԱՏ

ԵՐԵՎԱՆ 1940

25 FEB 2013

24934

3596
40

15 JAN 2010

ԲԱՆԱՁԵՎ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՏԱՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿ. Հ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՀԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Հայկական ՍՍՌ Տարրական և միջնակարգ դպրոցների աշխատողների Արհմիության Կենտկոմի 3-րդ պլենումը լսելով և քննարկելով ընկ. Նալբանդյանի զեկուցումը ՀԱՄԿԽ-ի 10-րդ պլենումի արդյունքների մասին լիովին հավանություն է տալիս և միանում 10-րդ պլենումի բոլոր որոշումներին։

Ընդգծելով, որ ՀԱՄԿԽ-ի 6-րդ պլենումը պրոֆմիութենական բոլոր օրգանների առաջ, որպես կարևորագույն խնդիր դրել է պրոֆմիությունների ողջ աշխատանքում պրոֆմիության անդամների աճած ակտիվությունն ու նախաձեռնությունը լայնորեն օգտագործելու խնդիրը, սակայն շատ պրոֆմիութենական օրգաններ, այդ թվում նաև մեր միությունը, մոռացել էին ՀԱՄԿԽ-ի 6-րդ պլենումի որոշումը և սխալ ճանապարհով էին ընթացել, ուռճացնելով պրոֆմիութենական վարձու ապարատը։

Եթե 1937 թ. մեր միության մեջ եղել են վճարովի 44 աշխատողներ, ապա ապախոշորացումից հետո դրանց թիվն աճել և հասել է 70 աշխատողների։ Նախկին ղեկավարությունը Երևան քաղաքում կազմա-

կերպել էր 5 ռայկոմ, որտեղ աշխատում էին վճարովի 9 աշխատողներ, և այդ ռայկոմների ապարատը պահպանելու համար ծախսվել է 65.658 ռուբլի։ Այն ինչ Միության Կենտկոմը Երևանում կարող էր անմիջապես ապահովել տեղկոմների աշխատանքի կենդանի և կոնկրետ ղեկավարությունը։

Մի շարք ռայկոմներ, ինչպիսին են՝ Ամասիան, Իջևանը, Ալագյազը, Նոյեմբերյանը, Աղինը, Մեղրին, Գյուղական ռայոնը, Ղարաբաղլարը, Սևանը, Ազիզբեկովը և այլն, իրենց ռայոնում ունեն պրոֆմիության 1743 անդամներ և նրանցից փաստորեն գանձել են 54.281 ռուբլի անդամավճար, այնինչ այդ շրջանների վճարովի ապարատի վրա ծախսել են 59.244 ռուբլի։

Ակումբներում, կարմիր անկյուններում վերահսկիչների, պատասխանատու հերթապահների, ինքնագործ խմբակների ղեկավարների և այլն պարտականությունները, որոնք հաջողությամբ կարելի էր կատարել պրոֆակտիվի ուժերով, կատարել են վճարովի աշխատողներ, ինչպես օրինակ՝ Երևան քաղաքում ուսուցիչների տան ինքնագործ խմբակների ղեկավարները ստացել են 30.000 ռուբլի։

Զբաղվականանալով նրանով, որ վճարովի ապարատի վրա ծախսվել է պրոֆմիութենական անդամավճարների մեծ մասը, Կենտկոմի նախկին ղեկավարությունը 1939 թ. պրոֆբյուջեում կատարել է 16.000 ռ. գերածախս և ապորինի կերպով ծախսել է վճարովի ապարատի պահպանման համար սոցապի միջոցներից 63.000 ռուբլի։

1940 թ. մեղ հաջողվեց պրոֆբյուջեից վերականգնել սոցապի միջոցներից ապորինի կերպով ծախսված գումարներից 50.000 ռուբլի։

Միության Կենտկոմի պլենումը գտնում է, որ պրոֆմիութենական աշխատանքներում գոյություն ունեն լուրջ թերություններ։

Ահա թե ինչ է ասված ՀԱՄԿՄ-ի 10-րդ պլենումի որոշման մեջ.

«ՀԱՄԿՄ-ի պլենումը գտնում է, որ պրոֆմիությունների աշխատանքի բարելավումը՝ լայն մասսաներին կազմակերպելու և կոմունիզմի ոգով, աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունք ունենալու ոգով դաստիարակելու գծով, սոցիալիստական մրցության և ստախանովական շարժման հետագա ծավալման գծով, աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի որակի բարելավման, աշխատանքային կարգապահության ամրացման համար մղվող պայքարում մասսաներին կազմակերպելու գծով, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի հետագա բարելավումը, պրոֆմիությունների անդամների կուլտուր-կենցաղային պահանջների ավելի լրիվ բավարարումը կարող է իրագործվել պրոֆմիութենական աշխատանքի մեջ պրոֆմիութենական ակտիվին իրոք լայնորեն ներգրավելու դեպքում միայն»։

Միության Կենտկոմի 3-րդ պլենումը որոշում է՝

1. Գտնել, որ վերը թված թերությունների վերացումը հանդիսանում է շրջկոմների, տեղկոմների կարեվորագույն աշխատանքը պրոֆմիությունների ապարատի ամրացման և հետագա աշխատանքների բարելավման համար։

2. Հաստատել Միության Կենտկոմի նախագահության որոշումը պրոֆմիութենական վճարովի ապարատը կրճատելու մասին.

ա) Միության Կենտկոմի ապարատից 8 մարդ կրճատե-

լով անտեսվում է 30.450 ռ. 5 ամսում, տարեկան՝ 73.080 ռ. բ) շրջկոմներից 20 մարդ՝ 52.841 ռ. 5 ամսում, տարեկան՝ 108.120 ռ. գ) ակումբներից 4 մարդ՝ 11.600 ռ. 5 ամսում, տարեկան՝ 34.916 ռ.։ Ընդամենը 37 մարդ՝ 94.891 ռ. 5 ամսում, տարեկան 216.116 ռ.։

Վճարովի ապարատի կրճատման կապակցությամբ ստացված միջոցներն օգտագործել պրոֆմիության անդամների կուլտուրական-կենցաղային սպասարկումը բարելավելու և նրանց նյութական օժանդակություն ցույց տալու համար։

Արգելել պրոֆօրգաններին ապորինի կերպով վճարովի աշխատողներ պահելը։

Միության Կենտկոմի 3-րդ պլենումը հանձնարարում է Միության Կենտկոմի նախագահությանը, կենտկոմի, շրջկոմների ու տեղկոմների ռեվիզիոն հանձնաժողովներին ամենախիստ հսկողություն սահմանել, որ պրոֆապարատները պահպանեն հաստիքային և ֆինանսական կարգապահություն։

Ուժեղացնել վերահսկողությունը պրոֆօրգանների կողմից միջոցները ճիշտ ծախսելու վրա և վճռականորեն պայքարել պրոֆմիութենական միջոցները շռայլելու ամեն մի փորձի դեմ։

4. Պարտավորեցնել Միության Կենտկոմի նախագահությանը, բոլոր շրջկոմների, տեղկոմների պրոֆմիութենական աշխատանքը վերակառուցել՝ միության անդամների պրոֆմիութենական աշխատանքի բոլոր ընդգավառներին լայնորեն մասնակից դարձնելու հիման վրա։ Ինչպես Միության Կենտկոմի նախագահությունը, այնպես էլ շրջկոմները ու տեղկոմները պետք է միության անդամներին լայնորեն մասնակից դարձնեն աշխատավարձի, աշխատանքի պաշտպանության, կուլտ., բնակ-կենցաղային հանձնաժողովների և սոցապխորհրդի աշխատանքներին, առևտրական ցանցի, մանկապարտեզների, մանկամսուրների և կենցաղային այլ հիմնարկությունների աշխատանքներին հսկելու գործին։

5. Միության Կենտկոմի 3-րդ պլենումը հավանություն է տալիս Կենտկոմի նախագահության որոշմանը հրահանգչական վճարովի ապարատը կրճատելու մասին և միաժամանակ առաջարկում է Միության Կենտկոմի նախագահությանը պրոֆակտիվից ստեղծել անվճար հրահանգչական ինստիտուտ։ Շրջկոմների կրճատված նախագահներին պահել հասարակական կարգով։

6. Միության Կենտկոմի պլենումը սխալ և հաժարում այն, որ միության անդամների ընդհանուր ժողովները խիստ սակավ են հրավիրվում։ Կենտկոմի պլենումը գտնում է, որ միության անդամների միջև կատարվող մասսայական ողջ աշխատանքը պետք է տարվի կոլեկտիվներում։ Այս կապակցությամբ միության անդամների ընդհանուր ժողովները պետք է հրավիրել ոչ ուշ քան 1½ ամիսը մեկ անգամ պրոֆմիութենական կարևորագույն հարցերը քննելու համար— տեղկոմների աշխատանքի վերաբերյալ հաշվետվությունները, պետական սոցիալիստական ապահովագրության բյուջեները, այդ բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես և ուսումնական պլանների կատարման և սոցմրցման ընթացքի հարցերը։

7. Համաձայն ՀԱՄԿԿ-ի 10-րդ պլենումի որոշման պրոֆմիության շրջկոմներին կից կազմակերպել հետևյալ հանձնաժողովները—կազմ-մասսայական

աշխատանքի, աշխատանքի պաշտպանության, աշխատավարձի, սոցիալական ապահովագրության, կուլտ և բնակ-կենցաղային։ Հանձնաժողովի անդամները պետք է առաջադրվեն տեղամասերի կողմից ամենաառաջավոր ակտիվիստների թվից և պետք է հաստատվեն պրոֆեսիոնալ միության համապատասխան կոմիտեի կողմից։

8. Ակումբների և կարմիր անկյունների աշխատանքը կատարել պրոֆմիության անդամների լայն մասնակցությամբ։

Ինքնագործ խմբակների ղեկավարմանը մասնակից դարձնել միության և նրանց ընտանիքի անդամներին։

Ակումբների վարչություններին ու կարմիր անկյուններին կից ստեղծել հանձնաժողովներ ըստ կուլտաշխատանքի առանձին տեսակների։

Հանձնարարել կենտկոմի նախագահությանը մեկ ամսվա ընթացքում նշել այդ հանձնաժողովների կազմակերպման պլանը։

9. Պլենումը պարտավորեցնում է պլենումի բոլոր անդամներին ՀԱՄԿՄ-ի 10-րդ պլենումի վորոշումների համաձայն տեղերում ակտիվորեն ձեռնամուխ լինել միության աշխատանքների վերակառուցմանը և թերությունների վերացմանը։

10. Առաջարկել շրջկոմներին կազմակերպել պրոֆակտիվի օգտագործումը, ճանաչել յուրաքանչյուրին իր աշխատանքում, հոգատար կերպով աճեցնել նրանց, խորհրդակցություններում և շրջկոմի նախագահության նիստերում լսել նրանց հաղորդումները, ընդհանրացնել լավագույն փորձերը, պատի և տպագիր մամուլում լուսաբանել առաջավորների աշխատանք։

11. Պլենումը նախազգուշացնում է, որ ֆիզկուլտ

աշխատանքը հասարակական կարգով տանելը, երբեք չի նշանակում, թե այդ աշխատանքը կարելի է որևե չափով թուլացնել։ Ընդհակառակը, պրոֆկազմակերպությունները պետք է ավելի ևս ուժեղացնեն և բարելավեն ֆիզկուլտ և պաշտպանական աշխատանքները, վորոնց ղեկավարմանը մասնակից դարձնելով սպորտի վարպետներին և ՊՍՊ-ի նորմաները հանձնած ֆիզկուլտուրնիկներին։

12. 3 րդ պլենումը անբավարար է համարում անդամավճարների գանձման ընթացքը։ Անդամավճարների գանձման յոթնամսյա պլանը, որ կազմում է 390.830 ռուբլի, կատարված է 334.243 ռ., այսինքն՝ 84,5 տոկոսով։ Մի շարք շրջաններ կատարել ու գերակատարել են անդամավճարների գանձման պլանները։

Այսպես օրինակ՝

Շրջան	7-ամսյա պլան	Գանձվել է	կատարման %
Ղափան	10500	16600	158,9
Սիսիան	7580	10479	138
Դիլիջան	5250	6334 -73	120
Ստեփանավան	9330	10830 -80	116
Վեղի	4950	5845	116
Աշտարակ	10500	11972	114
Կալինինո	7600	9032	119
Վաղարշապատ	10500	10788	102,8

Դրա հետ միասին առանձին շրջաններ անթույլատրելի կերպով հետ են մնում անդամավճարների գանձման գործում։ Այսպես օրինակ՝

Շրջան	7-ամսյա պլան	Գանձվել է	կատարման %
Նոյեմբերյան	5800	2738 -45	47
Մեղրի	4080	2460	60,3
Կիրովական	18080	11158	61,8
Ալագյազ	4950	3412 -10	69
Բասարգեչար	9900	3176 -50	32,1
Ախտա	9330	5245 -30	56,7
Աղին	4660	2574 -40	55,2
Ղուկասյան	4950	2843	57,5
Ալավերդի	10500	5500	52,4

Միության Կենտկոմի 3-րդ պլենումը դատապարտում է անդամավճարների գանձման գործում հետ մնացող շրջաններին և առաջարկում է Կենտկոմի նախագահությանը իր նիստերում սիստեմատիկորեն լսել հետ մնացող շրջանների դեկուցումները անդամավճարների գանձման ընթացքի մասին։ Միաժամանակ առաջարկել բոլոր շրջկոմներին ու տեղկոմներին մինչև ս. թ. սեպտեմբերի 25-ը կոլեկտիվների հերթական ժողովներում հատկապես քննարկել անդամավճարների գանձման հարցը։

3-րդ պլենումը դատապարտելի է համարում, որ մինչև այժմ ընդհանուր առմամբ դպրոցական աշխատողների միայն 90 տոկոսն է ընդգրկված միության մեջ։ Մի շարք շրջաններում դպրոցական աշխատողներին հիմնականում ընդգրկել են միության մեջ, որինակ՝ Գյուղական ռայոնում 172 աշխատողից ընդգրկված է միության մեջ 164 մարդ, կամ բոլոր աշխատողների 95 տոկ., Ստեփանավանի շրջանում 370 աշխատողից ընդգրկված է 361 մարդ, կամ 98 տոկ., Սևանի շրջանում՝ 195 աշխատողից 183-ը, կամ 98 տոկ., Շամշադինի շրջանում՝ 97 տոկ., Լենինականում՝ 96 տոկ.՝ Վաղարշապատում՝ 97 տոկ. և այլն։

Սակայն այս շրջանների կողքին մենք ունենք շրջաններ, որոնք ընդգրկման տեսակետից շատ հետ են մնում։ Օրինակ՝ Միկոյանի շրջանում միության մեջ ընդգրկված են բոլոր աշխատողների 73,8 տոկ., Ամասիայում 77,4 տոկ., Կարմիրում՝ 80 տոկ., Հոկտեմբերյանում՝ 80 տոկ., Մարտունիում՝ 83 տոկ., Մեղրիում՝ 85,6 տոկ., Զանգիբասարում՝ 86,2 տոկ. և այլն։

Պլենումն առաջարկում է շրջկոմներին և տեղկոմներին ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ դպրոցական բոլոր աշխատողներին միության շարքերն ընդգրկելու համար։

Պլենումը նպատակահարմար է գտնում մինչև ս. թ. հոկտեմբերի 1-ը հրավիրել շրջկոմների պլենումներ հետևյալ օրակարգով՝

1. ՀԱՄԿԽ-ի 10-րդ պլենումի և Միության Կենտկոմի 3-րդ պլենումի արդյունքները.

2. ՍՍՌՄ-ի Գերագույն Սովետի հունիսի 26-ի հրամանագրի կատարման ընթացքը.

3. Դպրոցական աշխատողներին միության շար-

ՀՀ Ազգային գրադարան
NL0205219

35195

քերն ընդդրկելու և անդամավճարների գանձման պլանի կատարման ընթացքը։

Կենտկոմի 3-րդ պլենումը հաստատ համոզված է, որ պրոֆօրգանները արագորեն կվերացնեն պրոֆմիության աշխատանքներում բացահայտված թերությունները և կապահովեն իրենց ապարատի վերակառուցումը, որպեսզի հաջողությամբ կատարենք այն խնդիրները, որ դրել է պրոֆմիությունների առաջ ԼԵՆԻՆԻ-ՍՏԱԼԻՆԻ ՄԵԾ ԿԱՐՏԻԱՆ։

3596
40

331.88
Կ-89

Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. Գարոնիկյան
Հանձնված է արտադրության 1940 թ. սեպտեմբերի 17-ին։
Ստորագրված է տպագրության 1940 թ. սեպտեմբերի 19-ին
ՎՖ 723, Պատվ. № 220, Տիրաժ 1000

Երևան Լուսերատի տպարան, Տերյան № 127